



ՌԲԱ-Ի ՊԱՐԳԵՎՐ ՍԱՄՎԵԼ ՃՉՄԱՉՅԱՆԻՆ

09.07.2014



Ռուսաստանյան բանկերի ասոցիացիայի (ՌԲԱ) և Հայաստանի բանկերի միության (ՀԲՄ) միջև գործընկերական հարաբերությունների զարգացման գործում իր ներդրման համար ՀԲՄ-ի նախագահ Սամվել Արարատի ճգնաչանը



պարգևատրվել է ՌԲԱ-ի Դիպլոմով և Հուշամեդալով: Պարգևը Ս. Ճգնաչանին հանձնել է անձամբ ՌԲԱ-ի նախագահ Գարեգին Թոսունյանը, ով արդեն 12 տարուց ավել զլխավորում է ՌԲԱ-ն:



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-Ն ԻՋԵՑՆՈՒՄ Է ՏՈԿՈՍԱԴՐՈՒՑՔՆԵՐԸ

23.07.2014



ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ը որոշում է ընդունել իջեցնել կորպորատիվ և սպառողական վարկերի, ինչպես նաև ներգրավվող ժամկետային ավանդների տոկոսադրույքները:

Բանկի հրապարակած հաղորդագրության մեջ, մասնավորապես, ասված է.

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն, հաշվի առնելով տնտեսության զարգացման գործընթացում ֆինանսական համակարգի ունեցած դերը և կարևորությունը, վերլուծելով ֆինանսական շուկայում գերակայող տոկոսադրույքների և սակագների փոփոխությունների միտումները, ինչպես նաև հաշվի առնելով հաճախորդների կողմից ֆինանսական ռեսուրսների նկատմամբ դրսևորած պահանջարկի

ծավալները, նախատեսում է առաջիկայում իջեցնել որոշ կորպորատիվ և սպառողական վարկերի, ինչպես նաև ներգրավվող ժամկետային ավանդների տոկոսադրույքները 2%-ով:

Բանկի կողմից նմանատիպ քայլերի ձեռնարկումը նպատակաուղղված է տնտեսության զարգացման տեմպերի խթանմանը, որն իր հերթին շղթայական ազդեցությամբ կնպաստի ֆինանսական համակարգի աճին և զարգացմանը, որի հեռանկարային նպատակը բնակչության սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակի բարձրացումն է»:

## ԴԵՊԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱՄ

31.07.2014



### Евразийский Банк Развития

հնարավորություններն ԱՊՀ երկրների ռեզիդենտ բանկերի համար» թեմայով: Միջոցառման աշխատանքներին մասնակցեցին դազախական առաջատար բանկերի և Մոսկովյան բորսայի ներկայացուցիչները, ինչպես նաև ԵԱԶԲ-ի վերլուծաբանները: Այսպիսով, ՌԴ-ի նախագահի խորհրդական Սերգեյ Գլազյեվի որոշ մասով ծայրահեղ բնույթի գաղափարները (որոնց մասին մենք գրել էինք Newsletter-ի նախորդ թողարկումում), ուղղված տնտեսությունից ԱՄՆ դոլլարի դուրս մղմանը և Եվրասիական տնտեսական միության (ԵՏՄ) երկրների միջև փոխադարձ հաշվարկներում ազգային արժույթների դերի և տեսակարար կշռի ավելացմանը, չեն մնում զուտ թղթի վրա ...

Կայացած բանավեճի մասնակիցները, մասնավորապես, նշում էին, որ ինտեգրված արժույթային շուկայի ձևավորումը ենթադրում է մասնակիցների փոխադարձ հասանելիություն Եվրասիական տնտեսական տարածքի (ԵՏՏ) և ԱՊՀ հետաքրքրված երկրների (ԵՏՏ+) շուկաներ, ուղիղ գնանշումների ապահովման պայմանների ստեղծում և արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների փոխադարձ հաշվարկների իրականացում ազգային արժույթներով:

Փորձագետների կարծիքով, ԵՏՏ+ երկրներից մասնակիցների մուտքն ինտեգրված բորսային շուկա կնպաստի լիկվիդայնության աճին, իսկ ազգային արժույթներով ուղիղ գնանշումների առկայությունը կկրճատի մասնակիցների կոնվերսիոն (արժույթների փոխանակման) ծախսերը:

Ս.թ. հունիսի վերջին Եվրասիական զարգացման բանկի (ԵԱԶԲ) գլխամասում (Ալմաթի, Ղազախստան) կայացավ կլոր սեղան «Ինտեգրված արժույթային շուկայի հեռանկարները և

Ինչպես նշեց ԵԱԶԲ-ի վերլուծական վարչության պետ Էլլա Բայբիկովան, «ներկա պահին ֆինանսական շուկաների ինտեգրման օգտին փաստարկների փնտրտուքն անցած է. ԵՏՏ երկրների միացյալ ֆինանսական շուկան կապահովի ֆինանսական ռեսուրսների ներգրավումը և բալանսավորված մրցակցությունը զարգացած համաշխարհային և տարածաշրջանային ֆինանսական կենտրոնների հետ»:

Կլոր սեղանի անցկացման անմիջական առիթ հանդիսացավ արժույթային շուկայում ինտեգրացիոն նախագծի սկիզբը. Մոսկվայի բորսան թույլ տվեց եվրասիական երկրների բանկերին մասնակցել արժույթային առքուվաճառքին առանց ռուսական արժույթային լիցենզիա ստանալու, քանի որ դրա համար բավարար է ունենալ ազգային կարգավորողի (ռեգուլյատորի) լիցենզիա:

Կլոր սեղանի ընթացքում Մոսկվայի բորսայի ներկայացուցիչները «Արժույթային շուկայի առքուվաճառքի մասնակցի» սերտիֆիկատ հանձնեցին նախագծի առաջին դազախական մասնակցին՝ «AsiaCredit Bank»-ին:

... Միասնական արժույթի ներդրումը ԵՏՄ-ում անխուսափելի է՝ այսպիսի հայտարարությամբ ս.թ. հուլիսի վերջին հանդես եկավ ՌԴ փոխվարչապետ Իգոր Շուվալովը:

«Կանցնի 5-10 տարի, և միասնական արժույթի ներդրման հարցը հաստատ կլուծվի, կգոյանան էմիսիոն կենտրոններ և միասնական արժույթ: Մենք կկարողանայինք խուսափել դրանից, եթե ռուբլին չջարդեինք, երբ փլուզվեց Խորհրդային Միությունը: Այն ժամանակ մենք քանդեցինք միասնական տնտեսական տարածքը և հիմա, մնալով տարբեր երկրներ, ստեղծում ենք այդ տարածքը՝ ասել էր Շուվալովը, հավելելով, որ միասնական արժույթի ներդրման թեման քննարկվելու է մասնագիտական շրջանակներում:



## ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵՆԻ ՀԱՇՎԻՆ

25.08.2014

Ներկա պահին ՀՀ կառավարությունում միաժամանակ մշակվում են մի քանի օրենսդրական փաթեթներ, որոնք ընդունման դեպքում կարող են էապես ազդել երկրում տնտեսական ընթացքների վրա:

Օրինագծերից մեկն ուղղված է շինարարության ոլորտում աճի խթանմանը: Փաստորեն ՀՀ կառավարությունը գնում է հեղափոխական քայլի՝ հիփոթեք վարկի տոկոսադրույքն առաջնային շուկայում վարկառուի համար կլինի... գրոյական իր կողմից վճարվող եկամտային հարկի նվազեցման հաշվին: Այսպես, եթե այսօր հիփոթեք վարկի տոկոսադրույքը կազմում է տարեկան 12%, ապա նշված օրենսդրական փոփոխություններից հետո այդ գումարը կհանվի վարկառուի

եկամուտներից: ՓԱՍՏՈՐԵՆ ԲԱՆԿԵՐՆ ԻՐԵՆՑ ՏՈԿՈՍՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ:



Փորձագետները համոզված են, որ այս նորույթը կհանդիսանա ահռելի խթան առաջնային շինարարական շուկայի համար, ինչը կբերի վերջինիս վերականգմանը և զարգացմանը:

Օրենսդրական նախագիծն արդեն մշակված է: Ա.թ. սեպտեմբերին այն կանցնի փորձագիտական քննարկումների փուլով և, հավանաբար, արդեն ս.թ. հոկտեմբերին կմտնի ՀՀ ԱԺ:

...«Հարկերի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունները և լրացումները ճշգրտել են հարկատուի դրամական միջոցների վրա արգելանք դնելու ընթացակարգը՝ իր կողմից հարկային պարտավորությունների կատարման նպատակով:

Փոփոխությունների միջոցով փորձ է արվել չեզոքացնել գործնականում ծացող խնդիրները, կապված, օրինակ, հարկատուի բոլոր բանկային հաշիվների վրա արգելանք դնելու հետ այն դեպքում, երբ նույնիսկ նրա մեկ հաշիվն գտնվող միջոցները բավարար են հարկային պարտավորությունները կատարելու համար: Այլ խնդիրներից, որոնք չեին լուծվում օրենքի նախորդ տարբերակով, նշենք այն դեպքերը, երբ արգելանք դնելու որոշման մեջ բացակայում էր արգելանքի ենթակա գումարի չափը կամ երբ արգելանքի վերացումը պարտքը մարելուց հետո տևում էր չհիմնավորված երկար և այլն:

Դրա հետ կապված հիշեցնենք, որ ս.թ. հուլիսի 16-ին Հայաստանի բանկերի միությունը հանդես եկավ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ հայտարարությամբ, որտեղ մասնավորապես ասվում է.

«Փաստում ենք, որ վերջերս ԴԱՀԿ-ի կողմից բանկերին ուղարկվող պարտապանի բանկային հաշիվներում և ավանդներում ունեցած դրամական միջոցների վրա արգելանք դնելու հետ կապված բանկերին ուղղվող էլեկտրոնային հաղորդագրությունների թվաքանակը վերջին ժամանակներում օրական 300-400 հաղորդագրություններից հասել է մինչև օրական 10 հազարի և դեռևս հաղորդագրությունների քանակի աճի միտումները պահպանվում են: Ակնհայտ է, որ այս գործառույթը որևէ կապ չունի բանկերի հիմնական գործունեության հետ, սակայն այն իրականացնելու համար բանկերից պահանջվում է մարդկային, ծրագրային և ֆինանսական մեծ ռեսուրսներ:

Այդ առիթով Հայաստանի Բանկերի միությունը հայտարարում է.

Բանկերը մշտապես եղել են և կան կառավարության կողմից իրականացվող ծրագրերի և գործառույթների իրականացման համար լավագույն գործընկերներից մեկը, մշտապես իրենց վրա կրել ենք սոցիալական պատասխանատվություն և իրենց նպաստն են ունեցել տարատեսակ սոցիալական ծրագրերի իրականացմանը: Այս դեպքում ևս, Բանկերը պատրաստակամ են ԴԱՀԿ-ին օգնելու իր գործառույթը կատարելու համար: Սակայն, կարիք կա օրենքի նախագծում բազմակողմանի անդրադարձ կատարել նաև Բանկերի կողմից բարձրացվող խնդիրներին:»

## ԱՊԱՌԻԿ ՎԱՐԿ ԶԵՂԶՈՎ

26.08.2014



ՎՏԲ-Հայաստան Բանկն առաջարկում է բոլոր իր վարկառուներին, ովքեր նախկինում ձեռք են բերել ապրանքներ ՎՏԲ-Հայաստան Բանկի ապառիկ վարկավորման միջոցով և բարեխղճորեն սպասարկել են ինչպես ապառիկ վարկը, այնպես էլ բանկում ունեցած այլ վարկերը, այսուհետ ձևակերպել հերթական

ապառիկ վարկը յուրաքանչյուր խանութում գործող տոկոսադրույթից 1% զեղչով:

«Ավելին, եթե հաճախորդը համապատասխանում է Բանկի պահանջներին, ապա նա ոչ միայն կստանա արտոնյալ տոկոսադրույթ, այլև վերջինիս վարկային հայտի հաստատման գործընթացը կտևի ընդամենը 1 րոպե», - նշված է Բանկի հաղորդագրության մեջ:

Արտոնյալ պայմաններով և արագ վարկ ստանալու համար անհրաժեշտ է այցելել ՎՏԲ-Հայաստան Բանկի հետ համագործակցող ցանկացած խանութներից մեկը՝ ներկայացնելով միայն անձը հաստատող փաստաթուղթ և հանրային ծառայությունների համարանիշ (սոցիալական քարտ):

ՎՏԲ-Հայաստան Բանկն ունի ապառիկ վարկավորման 690 վաճառակետ Հայաստանի ողջ տարածքում և մտնում է այդ շուկայի առաջատարների թվի մեջ:

27.08.2014



Այդ օրը ՀԲՄ-ի հյուրն էր Մոսկովյան միջազգային արժույթային ասոցիացիայի (ՄՄԱԱ) նախագահ, միջազգային բանկային համաժողովի (ՄԲՀ-2014) կազմակերպիչի նախագահ և ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանի հին բարեկամ Ալեքսեյ Մամոնտովը:

ՄՄԱԱ-ն, որը միավորում է իր շարքերում 100 վարկային կազմակերպություններից ավել, ԱՊՀ և հեռավոր

արտասահմանի տարբեր քաղաքներում անցկացնում է ամենամյա միջազգային բանկային համաժողովներ: Բանկիրների նման ներկայացուցչական հավաքներ արդեն անցել են Տալլինում, Կազանում, Թբիլիսիում, Կալինինգրադում, Ռոստովում, Սևաստոպոլում, Գելենջիկում, Թել Ավիվում և Օդեսայում: Այս անգամ ամբողջ ֆինանսական շուկայի համար նշանակալի միջոցառումն առաջին անգամ կանցկացվի Երևանում ս.թ. հոկտեմբերի 1-4 ([www.mbk2014.mmva.ru](http://www.mbk2014.mmva.ru)):

Համաժողովի թեման է «Բանկերը փոփոխությունների դարաշրջանում. նոր մարտահրավերներ, նոր փորձություններ, նոր հնարավորություններ»: Սպասվում է, որ մասնակիցների քանակը կհասնի 200-ի, այդ թվում Երևան կժամանեն կարգավորող մարմինների ներկայացուցիչներ, բանկերի և բորսաների թոփ-մենեջերներ, ֆինանսական, բրոկերային և խորհրդատվական ընկերությունների ղեկավարներ, ֆինանսական շուկայի մասնակիցների միությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ և վերլուծաբաններ, ՋԼՄ-ի ներկայացուցիչներ:

Համաժողովի մասնակիցները հնարավորություն կունենան փոխանակվել կարծիքներով և փորձով, մասնակցել տարբեր հարցերով քննարկումներին, որոնք կապված են միջբանկային ֆինանսական շուկայի ենթակառուցվածքի կարգավորման և զարգացման հետ (FX&MM, ժամկետային գործարքներով առևտուր, ռեպո գործարքներ, պարտքային գործարքների շուկա, նորագույն էլեկտրոնային համակարգերի և տեխնոլոգիաների կիրառում, դրամական փոխանցումներ և այլն):

ՀԲՄ-ի գրասենյակում Հայաստանի տարածքում գործող մի քանի բանկերի ղեկավարների մասնակցությամբ կայացավ շահագրգիռ քննարկում համաժողովի նախապատրաստման հարցերի շուրջ: ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ճզմաչյանը սիրով ընդունեց Ա. Մամոնտովի հրավերը մասնակցել համաժողովի բացմանը և ս.թ. հոկտեմբերի 2-ին ողջույնի խոսքով դիմել նրա մասնակիցներին:



## ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԱՐՄԱՐԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

27.08.2014



ՎՏԲ-Հայաստան Բանկի հաճախորդներն այսուհետ կարող են ձևակերպել պարբերական վճարման հանձնարարագիր Beeline-ի ծառայությունների դիմաց վճարելու համար:

Ընկերությունների համատեղ հաղորդագրության մեջ ասված է.

“ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲԸ-ն ընդլայնում է համագործակցությունը Beeline-ի հետ՝ առաջարկելով ՎՏԲ-Հայաստան Բանկում քարտային կամ բանկային հաշիվ ունեցող իր հաճախորդներին Beeline-ի գրասենյակներում բջջային կապի հետվճարային համակարգի, ֆիքսված հեռախոսակապի և ինտերնետի ծառայությունները ձևակերպելիս, նաև ձևակերպել “ՎՏԲ-Հայաստան Բանկ” ՓԲԸ պարբերական վճարման հանձնարարագիր: Նշված ծառայությունը թույլ կտա ՎՏԲ-Հայաստան Բանկի հաճախորդներին մարել ամենամսյա բաժանորդային պարտքը հաճախորդի կողմից ընտրված ամեն ամսվա N օրը առանց բանկի մասնաճյուղ այցելելու վերջինիս հաշվից բաժանորդային պարտքի գումարի ավտոմատ հաշվեգրման միջոցով:

Տվյալ ծառայությունն ակտիվացնելու համար հաճախորդին անհրաժեշտ է բջջային կապի հետվճարային համակարգի, ֆիքսված հեռախոսակապի և ինտերնետի ծառայությունները ձևակերպելիս Beeline-ի գրասենյակներում լրացնել համապատասխան դիմումը՝ նշելով ՎՏԲ-Հայաստան Բանկում գործող իր բանկային կամ քարտային հաշվեհամարը, պարտքի գումարի նախընտրելի չափը, ինչպես նաև ավտոմատ վճարման ենթակա ծառայությունները:

Հաճախորդները կարող են նաև նախապես տեղեկացվել իրենց բաժանորդային պարտքի գումարի չափի մասին ՎՏԲ-Հայաստան Բանկի կողմից ամեն ամիս ուղարկվող SMS հաղորդագրության միջոցով:

Դիմումը ձևակերպելու համար ֆիզիկական անձանց անհրաժեշտ կլինի ներկայացնել անձնագիր և հայտնել իրենց բանկային կամ քարտային հաշվեհամարը: Վճարման հանձնարարականի ձևակերպման պայմանների մասին լրացուցիչ տեղեկություն կարելի է ստանալ՝ զանգահարելով ՎՏԲ-Հայաստան Բանկի միասնական տեղեկատվական ծառայության 8787 հեռախոսահամարով, այցելելով բանկի պաշտոնական կայք կամ դիմելով մոտակա Beeline վաճառքի և սպասարկման գրասենյակներ:



**Beeline™**



28.08.2014



ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ը քարելավել է ուսման վարկի պայմանները. այսուհետ քանկում ուսման վարկ կարելի է ստանալ 15 րոպեում՝ ներկայացնելով ուսումնական հաստատությունից տեղեկանք, ուսանողի և վարկառուի անձերը հաստատող փաստաթղթեր և հանրային ծառայությունների համարանիշները:

Ինչպես հայտնել են քանկում, ուսման վարկից օգտվող հաճախորդները հնարավորություն կունենան ստանալու նաև հետևյալ առավելությունները.

- դառնալ ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ հաճախորդ և օգտվել ուսանողների համար հատուկ առաջարկներից,
- անվճար ստանալ VISA Student քարտ իր և իր ընկերոջ համար,
- մասնակցել խաղարկության և շահել ուսման վարձ, Notebook կամ iPad,
- գերազանց առաջադիմություն ունենալու դեպքում ստանալ վճարված տոկոսագումարների 20%-ի վերադարձ ուսանողական քարտին:

Վարկը տրամադրվում է ՀՀ դրամով, առավելագույնը 1 000 000 դրամ՝ 3-12 ամիս տևողությամբ: Ուսման վարկը տրամադրվում է 18% տարեկան տոկոսադրույքով: Ուսման վարկի պայմաններն ավելի մանրամասն ներկայացված են [այստեղ](#):

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ-ը 10 տարի առաջ առաջինն էր ՀՀ քանկային համակարգում, որ սկսեց ուսման վարկավորումը Հայաստանում: Անցած տարիների ընթացքում քանկն արդեն տրամադրել է ավելի քան 31 000 ուսման վարկ», - նշված է քանկի հաղորդագրության մեջ:

\* \* \*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի քանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական



ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,

- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):